Հարգելի հաճախորդներ,

Սույնով տեղեկացնում ենք, որ ժամանակավորապես անհասանելի են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ կողմից թողարկված VISA/MASTER CARD վճարային քարտերի հետևյալ գործարքները՝

Քարտից քարտ փոխանցումներ տեղական և արտասահմանյան Բանկերի կողմից թողարկված քարտերին

Քարտով վճարումներ ինտերնետ/օնլայն հարթակում, այդ թվում նաև էլեկտրոնային դրամապանակներին

Քարտով վճարումներ առևտրային կետերում

Գումարի կանխիկացում այլ բանկերի բանկոմատների և POS-տերմինալների միջոցով:

Հասանելի են հետևյալ գործարքները՝

Բանկի վճարային քարտերի հաշիվներին մուտքեր հնարավոր է կատարել Բանկի Cash-In բանկոմատներով, Բանկի մասնաճյուղերի դրամարկղերում, ինչպես նաև վճարային տերմինալներով, կամ քարտային հաշվեհամարին այլ բանկերից, ինչպես նաև այլ բանկերի քարտերից Բանկի քարտերին VTB-in ծառայության միջոցով:

Քարտային հաշիվներից գումարի կանխիկացումը հասանելի է միայն Բանկի բանկոմատներից և մասնաճյուղերի դրամարկղերից:

Քարտային հաշիվներից միջբանկային և ներբանկային փոխանցումները հասանելի են Բանկի Ինտերնետ/Մոբայլ Բանկ հավելվածով, ինչպես նաև Բանկի մասնաճյուղերում:

Քարտից քարտ փոխանցումները Բանկի բանկոմատների միջոցով կարող են կատարվել Բանկի այլ քարտապաններին և այլ Բանկերի ARCA վճարային համակարգի քարտապաններին, իսկ Բանկի MIR քարտապանները՝ նաև այլ Բանկերի MIR վճարային համակարգի քարտապաններին: